# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

***Ք. Երևան***

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և Էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ նիստ) կայացավ 2022թ. օգոստոսի 18-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

| | |
|---|---|
| Կարեն Հովհաննիսյան | Կոմիտեի նախագահ |
| Ռուբեն Սինոյան | Կոմիտեի փոխնախագահ |
| Արման Ալաբերքյան | Կոմիտեի անդամ |
| Հայկուհի Ռշտունի | Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար |

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 4-ը, հետևաբար, ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 համաձայն Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի անդամ, քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածի 4.01, 4.02 կետերով, 5-րդ հոդվածի 5.01 կետով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածի 21.04 կետով, 28-րդ հոդվածի 28.01 կետով, օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **09.08.2022թ-ի «ՄԻԿԱ»-«Լեռնային Արցախ-2» (ԱԽ-011) խաղի ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձության վերաբերյալ:**

***Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝***

Հաստատված համարել «Լեռնային Արցախ-2» թիմի մարզիչ Սարգիս Գարեգինի Աղաջանյանի կողմից կարգապահական խախատում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 41-րդ հոդվածի 19-րդ կետը՝ «Լեռնային Արցախ-2» թիմի մարզիչ Սարգիս Գարեգինի Աղաջանյանին որակազրկել 2 խաղով և «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ին

տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000 ՀՀ դրամի չափով:

2. **09.08.2022թ-ի «Սյունիք»-«Շիրակ-2» (ԱԽ-008) խաղավարտից հետո որոշ ֆուտբոլասերներ մտան խաղադաշտ:**

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝*
*Հաշվի առնելով 2022-2023թթ մրցաշրջանի սկիզբը՝ առավել մեղմ պատասխանատվության միջոցներ կիրառել.*

Հաստատված համարել «Սյունիք» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 39-րդ կետը՝ «Սյունիք ՖԱ» ՍՊԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

3. **10.08.2022թ-ի «Գանձասար»-«Ֆյունիկ Ակադեմիա» (ԱԽ-010) Խաղավարտից հետո որոշ երկրպագուներ մտան խաղադաշտ:**

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝*
*Հաշվի առնելով 2022-2023թթ մրցաշրջանի սկիզբը՝ առավել մեղմ պատասխանատվության միջոցներ կիրառել.*

Հաստատված համարել «Գանձասար» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 39-րդ կետը՝ «Գանձասար» ՖԱ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

4. **07.08.2022թ-ի «Վան»-«ԲԿՄԱ» (ՊԼ-009) խաղի ժամանակահատվածում տոմսերի վաճառք չկազմակերպելու վերաբերյալ:**

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝*

Հաստատված համարել «Վան» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 74-րդ կետը՝ «ՖԱ Վան» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

5. **11.08.2022թ-ի «Արարատ»-«Արարատ-Արմենիա» (ՊԼ-015) խաղի ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ:**

*1) «Արարատ-Արմենիա» թիմի երկրպագուների կողմից 4 հատ կարմիր գույնի ծխի կիրառում.*
*2) VIP հատվածում կարգադրիչների կողմից ոչ պատշաճ աշխատանք կատարելը.*

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝*
*Հաշվի առնելով 2022-2023թթ մրցաշրջանի սկիզբը՝ առավել մեղմ պատասխանատվության միջոցներ կիրառել.*

1) Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000 ՀՀ դրամի չափով:

2) Հաստատված համարել «Արարատ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 39-րդ կետը՝ «Արարատ» ՖԱ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»: